Gevorgian Seminary E-Newsletter

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ

Էլ. պարբերական

Ե Տարի, թիվ 1,
2019թ., մարտ



Այս համարում.

- *Հայոց Աստվածածինը*
- *Հիշիր շաբաթ օրը*
- *«Հրեշտակ» բառի բանասիրական քննություն*
- *Կինը Հին և Նոր Կտակարաններում*
- *Պացիֆիզմը և Եկեղեցին*
- *Վարդանանք այսօր*
- *Անհայտ ճեմարանավարտ պետական գործիչը*

Գևորգյան Ճեմարան
Էլ. պարբերական

Gevorgian Seminary
E - Newsletter

Ե Տարի, թիվ 1,
2019 թ., մարտ

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

Փետրվարի 28-ին Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ արդեն ավանդույթ դարձած միջոցառում՝ նվիրված Սբ. Վարդանանց տոնին: Հանդիսությունը կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի հետ միասին: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտներ, Մանկավարժական համալսարանի ուսանողներ, այլ համալսարանների ներկայացուցիչներ, դասախոսներ:
Բացման խոսքով հանդես եկան ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը և ԵՊՀ պրոռեկտոր տ.գ.թ., դոցենտ Ռուբեն Մարկոսյանը: Բանախոսությամբ ներկայացավ պ.գ.թ. դոցենտ Միքայել Մալխասյանը: Իրենց կատարումներով հանդես եկան ԳՀՃ և ԵՊՀ երգչախմբերը,

《Նարեկացի》 նվագախումբը:

Հունվար ամսին լույս տեսավ նաև մեր անչափ սիրելի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր պրն. Վաչագան Գրիգորյանի <<19-րդ դարի հայ գրականության պատմություն>> գիրքը՝ պատրաստված Գևորգյան Ճեմարանի համար:

Փետրվարի 24-ին Ս. Մարիանե երիտասարդաց միությունը կազմակերպել էր քննարկում Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու և մյուս եկեղեցիների դավանանքը թեմայով: Թեմայի բանախոսն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանի սան՝ Դավիթ սարկավագ Գիշյանը:

Հունվարի 18-ին ԳՀՃ աշխարհիկ դասախոսական կազմը և աշխատակիցները առաջնորդությամբ Ճեմարանի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի այցելեցին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունն իր հայրական սերն ու գնահատանքը բերեց Ճեմարանի տեսչությանն ու դասախոսներին կատարած նվիրյալ աշխատանքի համար: Տեսուչ Հայր Սուրբը դասախոսների անունից երախտագիտության խոսք ուղղեց Վեհափառ Հորը՝ իր սիրո և մշտական հոգածու վերաբերմունքի համար: Դասախոսներն առիթ ունեցան նաև այցելելու Մայր Տաճար, աղոթելու և տեսնելու վերականգնման աշխատանքների արդյունքում ի հայտ եկած հին որմնանկարներն ու հնագույն հիմքերը:

ՏԵՍՉԻ ԱՅՑԸ ՍԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

ԳՀՃ տեսուչ հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը հունվարի 30-ին մեկնեց Գեղարքունյաց թեմ, որտեղ հյուրընկալվեց թեմի քաղաքներից և գյուղերից Ճեմարանում ուսանող սաների ընտանիքներ: Շահեկան այս այցը բարեպատեհ առիթ էր ծանոթանալու սաների ծնողներին և հարազատներին և միասին աղոթելու: Այցեր եղան նաև այլ թեմերում բնակվող ուսանողների ընտանիքներ: Հայր Սուրբը հանդիպեց նաև Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգշ. Տ. Կիրակոս վրդ. Դավթյանի հետ, ում առաջնորդությամբ ուխտավորաբար այցելեցին Գավառի սբ. Կարապետ եկեղեցի և փառաբանական աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ հանուն հայոց երկրի և մայր Եկեղեցու անսասանության:

Փետրվարի 4-ին ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի «Կայուն զարգացման նպատակները և Եկեղեցին» համաժողովին մասնակցեցին նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի Ե լսարանի «Գործնական հոսքի» սաները: Համաժողովի ընթացքում քննարկվեցին ՄԱԿի կողմից առաջադրված 17 կետերը, որոնք պիտի նպաստեն աշխարհի զարգացմանը մինև 2030 թվականը:

ՀԱՅՈՑ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ

Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու մեծագույն անձինք հարամնա արժեք և օրինակ են հանդիսանում Աստծո անսուտ խոսքի քարոզչության և կենսագործման, քրիստոսահիմն դավանանքի անաղարտությունն անխառն պահելու և Սուրբ Հոգու առաջնորդությանը աներկբայորեն ապավինելու ճանապարհին: Քրիստոնեական եկեղեցին իր պաշտամունքի մեջ առանձնահատուկ տեղ է հատկացնում աստվածահաճո և աղոթանվեր կյանքով ու մաքրակրոն վարքով իրենք իրենց Աստծուն ձոնած սրբերին՝ հայցելով նրանց բարեխոսությունը, քանի որ, ինչպես սահմանում է Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, սրբերի բարեխոսությունը *«յաղթական եկեղեցիին աղօթքն է Զինուորեալ եկեղեցիին համար»*, քանի որ սրբերը իրենք *«իրենց մէջ կը տաճարակրեն զԱստուած: Անոնք միջնորդներ են Աստուծոյ եւ մարդերու միջեւ, ոսկի շղթան երկիրը երկինքին կապող…պատկերը Աստուծոյ հոգիին եւ նկարագրին»:*



Հայ եկեղեցին, լինելով անբաժան մասը Քրիստոսի հետ մի անբաժանելի միություն կազմող, Քրիստոսով ապրող և գործող Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու, ընդունում է աստվածաշնչյան համաքրիստոնեական սրբերի հետևյալ դասակարգումը. Մարիամ Աստվածածին, Հովհաննես Մկրտիչ, առաքյալներ, մարգարեներ, վկաներ, Ստեփանոս Նախավկա, ապա՝ Գրիգոր Լուսավորիչ, այնուհետ՝ սրբակենցաղ վանականներ ու խոստովանողներ: Ինչպես այս աստիճանակարգումն էլ է ցույց տալիս, քրիստոնեական եկեղեցու սրբերի մեջ մարդկության փրկության համար միջնորդող մեծագույն և առաջին բարեխոսը ամենասրբուհի Կույս Մարիամն է: Այս մասին խոսուն վկայություններ են կան հայոց ծիսապաշտական գրականության մեջ՝ Ժամագիրք («Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս սուրբ. **բարեխօսեա՛** առ Որդիդ քո Միածին…», *«Սբ. զԱստուածածինն եւ զամենայն սուրբս **բարեխօս** արասցուք առ Հայր…»*, *«Ընկա՛լ, Տէ՛ր, զաղաչանս մեր, **բարեխօսութեամբ** սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի Միածնի Որդւոյ քո…»*), Շարակնոց *(«Յարփւոյն լուսոյ ծագումն ի քեզ վառեաց զճրագ մարմնոյն լոյս աշխարհի որոյ զտեալ զպատկերն իրական զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն վասն որոյ **բարեխօսեա** նորոգել զմեզ ի հնութենէ մեղաց»*), Պատարագամատույց *(«Աստվածածնին սրբոյ կուսին Մարիամու…», «Զամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք»*) և այլն:

Աստվածամոր դերի ամենավաղ հիշատակումը փրկագործության պատմության մեջ պատկանում է Իրենիոսին, որը իրավացիորեն կոչվում է «Աստվածամոր առաջին աստվածաբան»՝ խոսելով հրեշտակից՝ Ճշմարտության մասին ավետիս ստացած Մարիամի սրբության մասին. *«Քանզի ինչպես առաջինը (Եվան), գայթակղվելով հրեշտակի խոսքերից, հեռացավ Աստծուց՝ զանց առնելով Նրա խոսքը, այնպես էլ մյուսը (սբ. Կույսը) հրեշտակի խոսքի շնորհիվ ավետիս ստացավ, որպեսզի կրի Աստծուն՝ հնազանդվելով Նրա խոսքին»:* Իսկ հայաշունչ խոսքով Աստվածամայրը ներբողվում է իբրև «Երրորդության հարս» (սբ. Մովսես Խորենացի), «Աստվածատունկ դրախտ» ու «Ջրածին վեմ»(Պետրոս Սյունեցի): Հրեշտակաբարբառ սուրբն Նարեկացու շուրթերով Աստվածածինը տարփողվում է որպես «Մարմնատեսիլ քերովբե», «երկնային տաճար» ու «Երրորդության խորհրդի խորհրդակից», (սբ. Գրիգոր Նարեկացի): Այսպես և սբ. Ներսես Շնորհալին Մատթեոսի Ավետարանի իր մեկնությունում ասում է, թե «Հոգին... մաքրեց Կույսին ամեն տեսակ մարմնական կրքերից» և խոնարհաստւն Սրբուհին «աստուածահայեաց աչք» ու «աստուածախօս լեզու» (սբ. Գրիգոր Տաթևացի) դարձավ համայն մարդկության համար: Առհասարակ գոյություն ունեն Սբ. Աստվածածնի բնութագրական-ըմբռնողական 2 տեսություններ՝ «քրիստոսակերպ» և «եկեղեցակերպ»: Առաջին խումբը դիտարկում է Աստվածածնի «առանձնաշնորհումները»՝ Քրիստոսի առանձնաշնորհումների նմանությամբ (սա Աստվածածնի կերպարի ըմբռնման կաթոլիկյան մոդելն է): Համաձայն այս տեսակետի՝ Քրիստոս միջնորդ է, իսկ Մարիամը՝ «միջնորդուհի» և այլն: Այստեղ, սակայն, խրթին է զանազանել Քրիստոսի միջնորդության և Իր մոր միջնորդության միջև առկա տարբերությունները (հաճախ դրանք չեն էլ մատնանշվում):

Մյուսը Աստվածածնի «եկեղեցակերպ» տեսությունն է: Համաձայն այս տեսության (որի հետևորդ է նաև Հայ առաքելական եկեղեցին)՝ Աստվածածնի խորհուրդը պետք է դիտարկվի Եկեղեցու խորհրդի նմանողությամբ: Մարիամը, ինչպես և Եկեղեցին, համագործակից է մարդկանց փրկության գործին՝ որպես Քրիստոսի գործակից և Եկեղեցու նախատիպար: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ Մարիամը, լինելով «պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութեան. Ան եկեղեցւոյ մէկ հոյակապ իրագործումն է…»:

Այսպիսով, ինչպես երանաշնորհ Գարեգին Ա հայրապետն է նշում, խոսելով Սբ Աստվածածնի մասին, նա «մարդկութեան փրկութեան միջոց եղած էր Քրիստոսի Ծննդեամբ ու կը մնայ մինչեւ այսօր որպէս բարեխօս մարդոց իր Որդւոյն մօտ»:

Սբ. Աստվածածնի սրբության առաջնայնության հանգամանքները, ըստ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի, հետևյալներն են. «Առաջինը բնականաբար իր՝ Աստուծոյ Մայր ըլլալն է: Երկրորդ իր գերազանց սրբութիւնն է. եւ երրորդ իր վերափոխուած ըլլալը»:

Միով բանիվ, «Սբ. Կույսը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մարդեղության, փրկագործության և եկեղեցագործության առհավատչյան է», որը, որպես Աստծո ընտրյալ, համաձայն Ավետարանական այն խոսքի, թե «բազում են կոչեցեալք եւ սակաւք են ընտրեալք» (Մատթ. Ի 16), խոնարհաբար իր վրա է ընդունում աստվածային մարգարեությունը, թե «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցես զանուն նորա Էմմանուէլ» (Ես. Է 14), և, այդպիսով, «Յիսուսի ծննդեան դրուագին մէջ Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի միջոցաւ» և Սուրբ Հոգու ներգործությամբ «Անմուտ Արեգակը փայլեց և ջահավորեց ողջ տիեզերքը» (սբ. Մովսես Խորենացի): Սբ. Կույսը, ընդունելով հրեշտակային ավետիսը, հանձն առավ Աստվածամայր լինելու երկրավոր ու երկնավոր առաքելությունը, «ուրեմն, վստահաբար, կրնանք ըսել թէ Ս. Կոյսը՝ որ կը կատարէր իր երկնաւոր Հօր կամքը, կը դառնար միակ արժանի Մայրը Քրիստոսի»: Այս ամենից հետո էլ, ի կատարումն երկրային առաքելության, իր Միածին Որդու միջոցով երկինք վերափոխվեց՝ լինելով մարդկության համար կատարելության գերագույն մարմնացում:

Գևորգ ուրկ. Կարապետյան

«ՀԻՇԻՐ ՇԱԲԱԹ ՕՐԸ»

Ողջ աշխարհին հայտնի են տասը պատվիրանները, որոնք Սինա լեռան վրա Աստված Մովսես մարգարեի միջնորդությամբ տվեց Իսրայելի ժողովրդին: Այս պատվիրաններով առաջնորդվել և առաջնորդվում է նաև Նոր Իսրայելի ժողովուրդը՝ քրիստոնյաները: Ամեն բարեպաշտ քրիստոնյա իր պարտականությունն է համարում կատարել և կյանքի կոչել Տիրոջ այս պատվիրանները, որոնցից առաջին չորսը կարգավորում են մարդ-Աստված հարաբերությունները, իսկ մնացյալ վեցը՝ մարդ-մարդ հարաբերությունները: Առաջին խումբը ամփոփվում է շաբաթ օրը սուրբ պահելու վերաբերյալ պատվիրանով, որը, քրիստոնեական ընկալմամբ, որոշակի հարցեր է առաջացնում: Արդյո՞ք մենք այսօր պահում ենք այս պատվիրանը: Եթե պահում ենք, ապա ինչպե՞ս: Հասկանալու համար փորձենք դիտարկել տասնաբանյայի պատվիրաններից մեկը նորկտակարանյան լույսի ներքո, որպեսզի տեսնենք, թե ի՛նչ առնչություն ունի քրիստոնեական կիրակին հրեական շաբաթի հետ:



Սուրբ Գրքում այս պատվիրանն ունի հետևյալ պատկերը. *«Հիշի՛ր **շաբաթ** օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր աշխատի՛ր և արա՛ քո բոլոր գործերը, իսկ յոթերորդ օրը **շաբաթ** է՝ Տիրոջը՝ քո Աստծուն նվիրված օր: Այդ օրը ոչ մի գործ չանես ո՛չ դու, ո՛չ էլ քո տղան ու դուստրը կամ քո ծառան ու քո աղախինը, քո եզն ու քո էշը և քո բոլոր անասունները, ինչպես նաև օտարականն ու քեզ մոտ բնակվող պանդուխտը, որովհետև Տերը՝ Աստված, վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ դրանց մեջ է, իսկ յոթերորդ օրը հանգստացավ: Դրա համար էլ Տերն օրհնեց **յոթերորդ օրը** և սուրբ հռչակեց»* (Ելք 20.8-11): Քրիստոնեական եկեղեցում այս պատվիրանը մոռացության չի մատնվել, այլ փոխվել է դրա ընկալումը: Սակայն մինչ դրան անդրադառնալը, ներկայացնենք հինկտակարանյան Իսրայելի ընկալումը:

Ավետարանում քիչ չեն դրվագները, որտեղ Իսրայելի կրոնական ուսուցիչները մեղադրում են Քրիստոսին անգործության շաբաթը խախտելու մեջ: Առաջին միջադեպը տեղի է ունենում, երբ Քրիստոս անցնում է ցորենի արտերի միջով (տե՛ս Մրկ. 2.23-28): Նրա աշակերտները սովածությունից հասկ էին պոկում, շփում ափի մեջ և ուտում: Փարիսեցիները, այդ արարքը տեսնելով, մեղադրում են նրանց օրենքը խախտելու մեջ:

Այստեղ Քրիստոս ասում է շատ կարևոր խոսքեր: Առաջինը՝ որ ***Նա է շաբաթ օրվա Տերը:*** Այսպիսով՝ Նա շեշտում է Իր Աստվածությունը և Արարիչ ու Օրենսդիր լինելը, միաժամանակ ցույց տալով, որ Ինքը չի կարող օրենք ստեղծել և խախտել Իր ուզած ժամանակ: Այդ պատճառով Քրիստոս ավելացնում է. ***«Շաբաթ օրը մարդո՛ւ համար է եղել,*** *և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար»* (Մրկ. 2.27): Այսինքն՝ շաբաթ օրվա պատվիրանի նպատակն այն է, որ մարդիկ հիշեն իրենց Արարչին, փառաբանեն Նրան իրենց գործերում: Սակայն ո՛չ այն նպատակով, որ լինեն այդ օրվա ստրուկը կամ մտածեն, թե Աստված իրենց ստեղծել է, որ շաբաթը մեկ օր դողալով նստեն տանը, գործ չանեն՝ վախենալով, որ իրենց վրա կիջնի Աստծու բարկությունը:
Կան այլ դրվագներ ևս, որտեղ Քրիստոս անբուժելի հիվանդություններից ազատում է մարդկանց, ինչի համար էլ փարիսեցիներն ու օրենքի ուսուցիչները կամենում են նրան սպանել. չէ՞ որ Նա օրենք է խախտել: Այստեղ պետք է նշել, որ Քրիստոս երբեք չի պատվիրել անտեսել չորրորդ պատվիրանը: Ընդհակառակը, տեսնում ենք, որ Նրա աշակերտները միշտ էլ պահել են շաբաթը սրբությամբ, այնպես, որ անգամ իրենց Ուսուցչի մահից հետո արագացրին խաչից իջեցնելը, իսկ յուղով օծման արարողակարգը հետաձգեցին մինչև կիրակի առավոտ: Սակայն, երբ յուղաբեր կանայք հասան գերեզման, Քրիստոս այնտեղ չէր. Նա հարություն էր առել…

Այդ պատճառով էլ այդ օրը՝ իրեական շաբաթի առաջին օրը, նրանք կոչեցին յոթերորդը՝ Տիրոջ Օր՝ Կյուրակե, որ է Տիրոջ Հարության և նոր արարչագործության օրը: Այսպիսով՝ քրիստոնյաների համար Աստծո հիշատակության օր դարձավ կիրակին: Սա ոչ թե պատվիրանի խախտում էր, այլ հակառակը՝ վերջինիս **կատարելագործումը**: Հին Կտակարանում շաբաթ օրը մարդ հիշում էր, որ Աստված իրեն չի մոռացել, որ Նա գալու է ու Իր ժողովրդին փրկելու է մեղքից ու մահվանից: Նոր Կտակարանում մարդ հենց կիրակի օրն է հիշում, որ Աստված արդեն եկել է և փրկել մեզ՝ մեռելներից Հարություն առնելով: Բոլոր «շաբաթօրյա» սպասելիքները կատարվեցին: Ի՞նչ իմաստ ունի այժմ պահել այն:

Այսպիսով՝ չորրորդ պատվիրանի էությունն ու իմաստը քրիստոնյաների համար ամբողջապես տեղափոխվեց շաբաթից կիրակի: Եթե անգամ բառացի դիտենք պատվիրանը, կտեսնենք, որ այնտեղ ոչ թե այսօրվա շաբաթի մասին է խոսքը, այլ՝ մի յոթերորդ օրվա, որը «**հանգստյան**» (եբր. שַׁבָּת հանգիստ) օր է (Ելք 20.8-11): Իսկ մեզ համար այդ օրը կիրակին է:

Սակայն առաջանում է հարց. կարելի՞ է արդյոք կիրակի օրը աշխատել: Եթե կա այդպիսի հնարավորություն, ավելի լավ է այդ օրը թողնել առօրյա գործերն ու աշխատանքը: Եվ քանի որ արդեն շաբաթ երեկոյից (կիրակնամտից) սկսած քրիստոնյան մտնում է Տիրոջ օրվա՝ Հարության խորհրդի մեջ, ապա պետք է այդ պահից մարդ Աստծուն նվիրվի (իզուր չէ, որ շաբաթ-կիրակին ոչ աշխատանքային օրեր են համարվում): Աստծուն նվիրվել նշանակում է մասնակցել աստվածպաշտական արարողություններին, ընտանիքում ընթերցել Աստվածաշունչը, բարի գործեր անել և այդ ամենը համեմել աղոթքով: Այսօր շատերն են ստիպված օրնիբուն աշխատել, սակայն դա դեռ պատվիրանի խախտում չէ, եթե մարդ հիշում է Աստծուն անգամ իր աշխատանքի ժամանակ: Տերը մարդուց սպասում է միայն սիրող սիրտ, իսկ Աստծուն նվիրված օրվա մասին պատվիրանը զուտ միջոց է, որ մարդու սրտին օգնում է չմարել:

Գևորգ Սրկ. Ավետիսյան

«ՀՐԵՇՏԱԿ» ԲԱՌԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հրեշտակները քրիստոնեական և հրեական կրոնների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում՝ որպես ոգեղեն բնությամբ արարածներ: Աստվածաշնչի մեջ եբրայական և քրիստոնյա մտածողների գաղափարական ընկալումները խաչավում են իրար հետ հրեշտակներին վերաբերող հատվածների միանշանակ ընկալման մեկնակետում: Դա Աստվածաշնչի՝ որպես ոչ միայն կրոնական գիրք ստեղծված լինելու հետևանք է: «Աստվածաշունչը,-ասում էր Արշակ Չոպանյանը,- մարդկային սրտին և ուղեղին քերթողական եւ իմաստասիրական բարձրագոյն արտայայտութիւններէն մէկն է», և այդ մշակութային գանձարանի մեջ կարող ենք գտնել հրեշտակների մասին այն ամենը, ինչը քաղաքակրթության պատմության վաղնջական շերտերից արտացոլվել է Սուրբ Գրքի էջերում: Սակայն այս ամենը փոխանցվել է նաև լեզվական մտածողության շնորհիվ, ուստի հրեշտակների մասին եղած հրաշապատումները սինթեզն են հնագույն ազգերի ունեցած պատկերացումների և Սուրբ Գրքի հեղինակների ընկալումների: «Հրեշտակ» բառը (հուն.՝ «angelos», եբր.՝ «malāck») պարսկական փոխառություն է պահլավերեն «frēštak» ձևի, որն իր նախնական իմաստով («սուրհանդակ, պատգամաբեր») գործածվել է միջնադարյան գրականության մեջ. զոր օրինակ ՝ «Յղէ առ նա հրեշտակս պատարագաւք եւ կոչէ զնա առ ինքն ի Նինուէ» («Պատմութիւն Սեբէոսի»): Հունարենից և պարսկերենից փոխառյալ բառերում «ֆ» տառը փոխարինվել է «հ»-ի՝ դաֆնէ-դափնի, ֆրահանգ-հրահանգ , այնպես էլ՝ ֆրեշտակ-հրեշտակ: «Հրեշտակ» բառը Զենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» երկում միննույն ժամանակ հանդիպում է «հրշտակ» տարբերակով՝ ե-ն սղված, բայց սա իմաստային որևէ տարբերություն չունի նախորդից: Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը ցույց է տալիս, որ ավեստերենում «հրեշտակ» բառի պահլավերեն ձևը նշանակել է հենց «պատգամավոր»: Ըստ բառակազմության՝ «հրեշտակ» բառը, լինելով իրանական փոխառություն, կազմված է -tak ղերբայակերտ ածանցով, ինչպես՝ ամբարտակը: Թեև Եղիշե պատմիչն իր նամակներից մեկում այն փոխառություն չի համարում՝ բառաբարդված բազմաթիվ կազմությունների պատճառով, սակայն պարսկական «ֆր» հնչյունակապակցությունը գրվում էր «հր»-ով. «գուցե իր հնչարտասանություն է եղել նաև միջին պարսկերենի որևէ խոսվածքում, իբրև ֆ-ի

նեղվածքի թուլության արտահայտություն»: Այսպիսով՝ «հրեշտակ» բառն իրանական փոխառություն է, ինչպես հայ հեթանոսական կրոնին և քրիստոնեությանն առնչվող մի շարք այլ բառեր ևս՝ դրախտ, դժոխք, մոգ, մեհյան, բագին, մարգարե, հրաշք, զոհ... Բառարաններում հիմնականում հետևյալ հերթականությամբ են բացատրված հրեշտակ բառի իմաստները. 1.գերբնական էակ, Աստծո պատգամավոր, 2.սուրհանդակ, լրաբեր, 3.Աստծո պատգամավոր՝ մարգարե կամ առաքյալ, 4.հեթանոսական չաստված, դև: Բառի նոր իմաստների հանդիպում ենք Առձեռն բառարանում: Այսպես՝ առաջին հիմնական իմաստի կողքին հեղինակները նշում են բառի եբրայերեն տարբերակը՝ «մէլեք», իսկ վերջին՝ հինգերորդ իմաստը հետևյալն է. «մէկ բանին նշանը, ինչպէս ծուխը՝ կրակի»: Վերջին իմաստն արտահայտված է Շահան Շահնուրի հոդվածներից մեկի հետևյալ հատվածում, որտեղ անձնական հրեշտակը ներքին պայքարի արտահայտությունն է. «Ինչ որ կայ, այն մշտանորոգ պայքարն է, զոր արուեստագէտը կը մղէ իր ներքին բոցին հետ, ըսենք՝ իր անձնական հրեշտակին հետ: Այդ պայքարը չի կրնար իմաստ ունենալ յաչս անոր, որ չի տեսներ Հրեշտակը, այլ միայն արուեստագէտին շարժումները, որ տեղեակ չէ փոխադարձ ուժերու չափին, բայց որ կը տեսնէ անկումը արուեստագէտին եւ վերելքը, փոխն ի փոխ»: Իսկ 1967 թ. Բեյրութում տպված բառարանում տրված է մեկ իմաստ ևս («3.գեղեցկուհի, 4.շատ բարի և հեզ»), որը առօրյա-խոսակցական և գեղարվեստական խոսքում հաճախ է կիրառվում՝ որպես փաղաքշական դիմելաձև: Բազմաբովանդակ բառի հետաքրքիր բացատրություններ զետեղված են նաև Ա. Սուքիասյանի բառարանում, որտեղ, որպես բառի առաջին իմաստ, դրված է կրոնականը. «1.անզգոս, հրանյութ, հրանյութագոյ, լուսաթռիչ», սակայն այժմ բառը կորցրել է իր նախնական իմաստով գործածությունը:

Սբ. Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում «հրեշտակ» բառը «ազգապետ, նահապետ» իմաստով է գործածում, որն էլ Էդվարդ Աղայանն իր լեզվաբանության պատմությանը նվիրված գրքում եբրայերենի՝ նախամայր լեզվի (Ադամի լեզվի) հետ կապված մեկնաբանություններում վկայակոչում է: V դարի հայ ինքնուրույն գրականության մեջ նշանակալի տեղ ունեցող Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում հանդիպում ենք մի շարք նոր գիտաբառերի և նորաբանությունների: Այդ շարքին է դասվում «հարկաւոր» բառը. «...Ասի հրեշտակ ոգի, այլ ոգի հարկաւոր՝ որ է հնազանդ և կամակատար» (I, ԻԳ): Բառը թեև բազմիմաստ է, սակայն մեզ հետաքրքրում է «սպաս, յարգ. այսինքն սպասահարկու. պաշտօնեայ» իմաստները: Իմաստային այս կապն էլ ակնառու է դարձնում «հրեշտակ-հարկաւոր» բառերի նույնանիշությունը: Նշենք նաև, որ Նոր Կտակարանի ոսկեդարյան թարգմանության մեջ այդ բառը տեղ է գտել Պողոս առաքյալին վերագրվող թղթերից մեկում. «Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորութիւն...» (Եբր. Ա 14):

2016 թ. Սուրբ Ղազարի միաբանության մեջ հրատարակված «Գրաբարի ուսումնական բառարանում» հեղինակը մի շարք բազմիմաստ բառերի բացատրություններում նշում է նաև հրեշտակների խումբը՝ որպես ընդհանուր անվանում. օրինակ՝ երկնահոյլ, զինուորութիւն, զօրութիւն, կարգ, պարունակ, իսկ ավելի ընդարձակ

կապակցության հանդիպում ենք Աստվածամորը նվիրված շարականներից մեկում՝ «բազմերամք վեհագունիցն հոյլքն յոգնախումբք»:

«Հրեշտակ» բառով նոր կազմություններ կամ ինքնատիպ արտահայտություններ կան հետագայի պատմիչների և գրողների երկերում ևս՝ «իրեշտակացոյց» (Ղազար Փարպեցի), «իրեշտակասէր» (Գրիգոր Նարեկացի), «իրեշտակական շրթանցն շարժմամբ…վարդապետէր նոցա» (Հովհաննես Դրասխանակերտցի): Իսկ արդեն Առաքել Սյունեցու «Ադամգրքում» իրեշտակները բնորոշվում են «իրձուաձայն» «օրհներգաբան» որոշիչներով, որոնք նշանակում են՝ զվարթաձայն, փառաբանող: Հետաքրքական է նաև այն, որ Հիսուս Քրիստոս մեր մատենագրության մեջ հաճախ անվանվում է «իրեշտակ»՝ համաձայն Եսայու մարգարեության 7-րդ գլխի, որտեղ կանատեսված Մեսիան կոչվում է «Մեծ խորիրդի իրեշտակ»: Բայց և անմեղ մարդուն նույնպես անվանում են իրեշտակ՝ մատնանշելով նրա աստվածային էությունը, բարեկամեցողությունը, երկնային երանավետ վիճակը, երկնային, վերին իրողություններով հմայված լինելը: Երբեմն այդպիսիններին համեմատում են իրեշտակի հետ. բաղդատության ակնառու օրինակներից է Երուխանի հուզիչ նովելներից մեկի հետնյալ հատվածը. «…Վարդուհին կար…իրեշտակի պես անճիկ մը …Ան ինծի կսիրեր …ես անիկա խենթի պես կսիրեի …իրար պիտի առնեինք …Աստված չուզեց»:

Նարեկ դպիր Գասպարյան

ԿԻՆԸ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Աշխարհի գրեթե բոլոր կրոններում կանանց վերապահվել է որոշակի դերակատարություն: Բացառություն չէ նաև քրիստոնեությունը: Մեծագույն պատիվը կնոջը վերապահվել է հենց քրիստոնեության մեջ՝ Սուրբ Աստվածամոր կերպարով: Այս տեսանկյունից երբեւէ ժամանակավրեպ չի կարող նկատվել կնոջ դերակատարությունը եկեղեցական-համայնքային կյանքից ներս: Արարչագործությունը իր լրումին հասցնելու համար Աստված «Ստեղծ … զմարդն հող յերկրէ…» (Ծննդ. 2.7): Մարդու արարումը դարձավ արարչագործության վերջնակետը, թագն ու պսակը: Մարդուն տրվեց ամբողջ բնությանն իշխելու եւ նրա հանդեպ խնամք տանելու իրավունքը: Սակայն Աստված, տեսնելով Ադամին մենակ, ասաց. «Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա» (Ծննդ. 1.28-29), ինչը այն հարցի պատասխանն է, թե ինչու ստեղծվեց կինը: Եւ Աստված «արկ թմրութիւն ի վերայ Ադամայ» (Ծննդ. 2.21)՝ ստեղծեց «օգնականին»: Ո՞րն էր լինելու այդ «օգնականի» դերակատարությունը: Այս հարցի միակ եւ հարմարագույն պատասխանը Ադամի կողմից տրված անվանումն է նրան՝ «Կեանս» (Ծննդ. 2.20): Կնոջ արարումից հետո Աստված պատվիրում է. «Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ…» (Ծննդ. 2.24): Աստվածաշնչյան այս տեղին վկայությունն է տղամարդու եւ կնոջ անբաժանելիության ու միասնականության: Կինը դառնում է տղամարդու իդեալական եւ անհրաժեշտ ուղեկիցը. «Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի Կին, զի յառնէ իւրմէ առաւ» (Ծննդ. 2.23): Ընթերցելով Հին Կտակարանը՝ առաջին հայացքից մեզ թվում է, թե կանայք ներկայացված են ավելի ցածր դիրքում, քան

տղամարդիկ: Այս թյուր կարծիքին պատասխանում է հենց Ինքը՝ Աստված, երբ հավասարապես Իր պատկերն է տալիս նրանց. «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա» (Ծննդ. 1.27): Ընթերցելով կանանց մասին Հին Կտակարանում ներկայացված պատումները՝ տեսնում ենք, որ յուրաքանչյուրին վերապահված էր մի կարևոր առաքելություն: Սակայն այս համահավասար հարաբերություններն առաջին հայացքից խառնվում են, երբ. «Ետես կինն զի բարի էր ծառն ի կերակուր եւ հաճոյ աչաց հայելոյ, եւ գեղեցիկ ի տեսանել. եւ առ ի պտղոյ նորա, եկեր» (Ծննդ. 3.26): Այս ամենից հետո, որպես հետևանք պատվիրանազանցության, Աստված կնոջ համար սահմանում է ղեկավարվել իր ամուսնու կողմից. «Եւ նա տիրեսցէ քեզ» (Ծննդ. 3.16): Տղամարդը իշխանություն է ստանում իր կնոջ նկատմամբ, մի երևույթ, որը նոր էր եւ չկար սկզբնական օրերում: Այս գաղափարը կարմիր թելի պես առկա է ամբողջ հրեական աշխարհում: Հրեա կինը պարտավոր էր մնալ տանը՝ իր ամուսնու և զավակների կողքին, այլ ոչ թե փողոցում, ինչպես որ վարվում էին ոչ առաքինի կանայք: Հրեա կնոջ առօրյան էր՝ «յառնէ ընդ արշալոյսս, եւ տայ կերակուր ընտանեաց» (Առակաց 31.15): Նրանք, իրենց ուսերին ստանձնելով տնային բոլոր պարտավորությունները, իրենց ամուսիններին և երեխաներին պետք է ապահովեին առօրյայում անհրաժեշտ ամեն ինչով: Հրեականության մեջ կանայք երբեք չեն կարող տղամարդու հետ հավասար իրավունքներ ունենալ, քանի որ Աստվածաշնչի համաձայն՝ Աստված կնոջը ստեղծել է տղամարդու կողոսկրից՝ հանուն տղամարդու, եւ նա պետք է համեստ լինի ու ծառայի իր ամուսնուն: Կանայք ընդգրկվում էին տղամարդու սեփականության, գույքի ցանկում (Ելից 20.17), նրանց ուխտերը կարող էին չեղյալ համարվել, եթե ուխտյալի հայրը դեմ էր դրան (Թվոց 30. 3-5) եւ այլն:

Նոր Կտակարանում հանդիպում ենք կանանց նկատմամբ նոր վերաբերմունքի, ինչը, կարծես, հակադրություն է հրեականությանը: Քրիստոս, գալով քարոզչության, նոր վերաբերմունքի է արժանացնում կանանց, ինչն անընդունելի եւ խորթ էր ժամանակի հասարակության համար, քանի որ, ինչպես նշվեց, մինչ Աստծո Որդու մարմնանալը կանանց մասին պատկերացումները բավականին տարբեր էին: Քրիստոս, մերժելով կնոջ նկատմամբ ժամանակի խտրական վերաբերմունքը, նրան հասցնում է կյանքի շնորհների ժառանգակցի աստիճանի, ինչպես նշվում է Պետրոս առաքյալի թղթում. «Իբրեւ ժառանգակցաց շնորհացն կենաց» (Ա. Պետրոս 3.7): Կանայք բավականին մասնակցություն ունեին Քրիստոսի կյանքի կենսական դրվագներին Խաչելություն, թաղում (Ղուկ. 23. 55-56), դատարկ գերեզմանին այցելություն, Հարության ավետիսին ականջալուր լինելը (Ղուկ. 24.1-7)): Չորս ավետարանիչների կողմից (մասնավորապես՝ Հովհաննու ավետարանում) կանանց անընդհատ հիշատակությունները փաստում են կանանց կարևորության մասին: Այնուհետև, շարունակելով ընթերցել Նոր Կտակարանը, տեսնում ենք, որ ակամա ներկա ենք լինում մի անխուսափելի թեմայի՝ Պողոս առաքյալի վերաբերմունքին կանանց նկատմամբ: Նրա վերաբերմունքը կանանց եւ տղամարդկանց միջև հավասարության վերաբերյալ հստակ երևում է Գաղատացիներին ուղղված թղթում. «Չիք խտիր, ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Գաղ. 3.28): Առաջին հայացքից, երբ ընթերցում ենք Պողոսի որոշ գրվածքներ, կարծես թե նա վկայում է տիրող հասարակարգի ճշմարտացիության մասին.

«Կին մարմնի իւրում ոչ իշխէ, այլ այրն» (Ա Կորնթ. 7.4), սակայն այստեղ մարմնի վրա իշխանություն ասելով՝ առաքյալը նկատի ունի դավաճանության հանգամանքը, քանզի ամուսնությունից հետո կնոջ մարմինը պատկանում է ամուսնուն եւ միայն ամուսինն ունի իշխանություն դրա վրա: Թե՛ կնոջ, թե՛ ամուսնու մարմինը անհաղորդ է յուրաքանչյուր օտարին, ինչն էլ հենց ամուսնական առաքինության եւ հավատարմության խորհրդանիշներից մեկն է: Ի վերջո, երբ Պողոս առաքյալն ասում է, որ «զի այր է գլուխ կնոջ, որպես եւ Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ, եւ ինքն է Փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք՝ իւրեանց արանց յամենայնի» (Եփես. 5.23-24), բացարձակապես նկատի չունի մարդկային հարաբերությունների՝ տեր եւ ծառայի կարգավիճակը, իսկ հնազանդությունը անխոնջ ծառայությունը չէ. այստեղ հիմնական իշխող գաղափարը սիրո, փոխադարձ հարգանքի եւ փոխըմբռնման գաղափարն է: Ինչպես Եկեղեցին է սիրով, հոժարությամբ հնազանդվում եւ իրեն գլուխ ընդունում Քրիստոսին, որպեսզի Քրիստոս պահի, պաշտպանի իրեն, նույնպես և կանայք պետք է ընդունեն իրենց ամուսիններին: Հնազանդությունը նշանակում է նվիրում, հավատարմություն, անսահման սեր, զոհողություն, իսկ տեր լինելը՝ տղամարդուց պահանջում է սեր, հոգատարություն, խնամք, պաշտպանություն, քանզի իզուր չի ասել Պողոս առաքյալը, որ՝ «սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարտաւանէ, ոչ հպարտանայ. Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, ոչ գրգռի, ոչ խորհի չար… ամենայնի հուսայ, ամենայնի համբերէ. ՍԷՐ ՈՉ ԵՐԲԵՔ ԱՆԿԱՆԻ…» (Ա Կորնթ. 13.4-8):

Մեսակ սրկ. Գրիգորյան

ՊԱՑԻՖԻԶՄԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Պացիֆիզմը (լատիներեն Pacificus – խաղաղարարական, pax- խաղաղություն և facio-եմ անում), լայն իմաստով, ցանկացած պատերազմի անվերապահ դատապարտման գաղափարախոսությունն է, նրա մերժումը՝ որպես արտաքին քաղաքականության գործիք: Այլ կերպ ասած՝ պացիֆիզմը դատապարտում է բոլոր պատերազմները՝ ցանկացած ձևով՝ ժխտելով նույնիսկ արդարացի և ազատագրական պատերազմների օրինականությունը: Պացիֆիզմի կողմնակիցները, հենվելով բարոյական սկզբունքների վրա, դատապարտում են զինված պայքարի ցանկացած դրսևորում, որը բազում զոհերի պատճառ է հանդիսանում: Հիմնական գաղափարական համոզմունքն այն է, որ ցանկացած խնդրի խաղաղ լուծումը հնարավոր է միայն մանիֆեստների և բանակցությունների միջոցով:

«Պացիֆիզմ» տերմինը և նրա սահմանումը, առաջին հերթին, խոսում են դատապարտման այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են անբարոյականությունն ու ֆիզիկական բռնությունը և պայքարում նրա դեմ՝ որպես պատերազմի և իշխանության հասնելու միջոցի: Պացիֆիզմի նշանը կամ խորհրդանիշը, այսպես կոչված, «PACIFIK»-ը, խորհրդանիշն է խաղաղության, հակապատերազմական շարժման, ինչն էլ հենց հասարակության կառուցողն է:

1901 թ., Գլազգոյում՝ «Համընդհանուր խաղաղության կոնգրես»-ում, մի քանի անդամներ, սկզբում ոչ պաշտոնապես, ապա՝ բացեիբաց, հանդես եկան «պացիֆիստ» և «պացիֆիզմ» հասկացությունների ներդրման առաջարկությամբ:
Պացիֆիզմը չի հակասում սովորական մարդկային բարոյականությանը, որը արգելում է մարդասպանությունը: Միևնույն ժամանակ պացիֆիստները մերժում են և՛ քաղաքական, և՛ կրոնական պատերազմները, ոչ մի տարբերակում չեն դնում արդար և անարդար պատերազմների միջև, երբեք պատերազմը առաջընթացի հետ չեն կապում և մեղադրում են պատերազմի բոլոր մասնակիցներին:

Պացիֆիստների գործունեությունը հանգեցրեց նրան, որ բազմաթիվ երկրների օրենսդրության մեջ, որտեղ կա զինվորական պարտականություն, նախատեսվեց այն այլընտրանքային քաղաքացիական ծառայությամբ փոխարինելու հնարավորությունը:
Վաղքրիստոնեական Եկեղեցին, ենթադրաբար, պացիֆիստական էր, քանի որ մինչև Ք.հ. 170-180թթ. հռոմեական բանակում քրիստոնյա զինվորականների մասին ոչինչ հայտնի չէ:

Վաղ Եկեղեցում գերակշռելով՝ պացիֆիզմն ամբողջությամբ հենվում էր հատուկ աստվածաբանական և աստվածաշնչային հիմքի վրա՝ Աստվածաշնչի, Տասնաբանյայի և Լեռան քարոզի հեղինակության վրա: Վաղ քրիստոնյաները կարծում էին, որ Հիսուս Քրիստոսի օրինակը քրիստոնեական պացիֆիզմի աղբյուրն է, որ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո մարդեղությունը և Նրա գործողություններն արտացոլում են Աստծո կամքը: Որոշ

վաղքրիստոնեական հեղինակներ հենց պացիֆիստական դիրքորոշում ունեին. օրինակ՝ Հուստինոս Վկան գրում է. «Եվ մենք, որ նախկինում մեկս մյուսին սպանում էինք, ոչ միայն թշնամություն չենք անում թշնամիների հետ, այլև, դատաքննողներին չստելու և չխաբելու համար, ուրախությամբ խոստովանում ենք Քրիստոսին և մեռնում»:

Պացիֆիզմի գաղափարներն աջակցություն էին գտնում քրիստոնեության գլխավոր աստվածաբանական դրույթներում: Նախ և առաջ, կյանքը Աստծո սրբազան շնորհն է և ոչ ոք իրավունք չունի այն խլելու: Եթե յուրաքանչյուր մարդ իրական կամ հնարավոր որդին է Աստծո, ապա ոչ մի քրիստոնյա իրավունք չունի նրա կյանքը խլելու: Նույն կերպ էլ Աստծո Արքայությունը երկրի վրա Աստծո օրենքի հովանու տակ միավորում է բոլոր մարդկանց և արգելում է բռնությունը ցանկացած մեկի նկատմամբ:

Սակայն երբ Աստծու կամքը դիտարկում են ճակատագրապաշտության տեսանկյունից, ծնունդ է առնում մի նոր մոլորություն: Ժամանակակից շատ աղանդների՝ օրինակ եհովայի վկաների կողմից Պացիֆիստական գաղափարախոսությունը (ըստ որի՝ առանց թշնամու դեմ պատերազմելու պետք է ամեն ինչ Աստծո տնօրինմանը հանձնել) հանդես է գալիս որպես կույր ճակատագրապաշտություն: Եվ ճակատագրապաշտական այս տեսությունը ոչինչ է դարձնում մարդու ազատությունը, նրա բոլոր գործողությունները կախման մեջ դնում արտաքին ուժերից: Քրիստոսի Եկեղեցու համար ընդունելի է արդարացի պատերազմը: Արդարացի պատերազմի ավանդույթը մերժում է թե՛ պացիֆիստական մոտեցումը, որ պատերազմը միշտ անբարոյական է, և թե՛ ռեալիստական մոտեցումը, որ պատերազմը դուրս է բարոյական դատողության սահմաններից: Այն պատերազմը տեսնում է որպես մարդկային գործունեություն, հետևաբար՝ բարոյական քննության ենթակա: Ավելին, այն պատերազմը համարում է գործիք, որը քաղաքական գործիչները կարող են օգտագործել համապատասխան հանգամանքներում արդարության հասնելու համար:

Ամփոփելով կարող ենք ասել, որ խաղաղություն հաստատելու և ապահովելու համար Քրիստոսի հետևորդները պետք է պատրաստ լինեն պատերազմելու, եթե տվյալ պատերազմն արդարացի է, և նրանք պետք է պատրաստ լինեն մղել այն արդար ձևով, որպեսզի հնարավոր լինի ստեղծել արդար և խաղաղ վիճակ ազգերի միջև՝ այդպիսով ձգտելով կատարել Եսայի մարգարեի խոսքերը, ըստ որի՝ ***«ազգերն իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն, եւ իրենց սուիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրայ սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել»*** (Ես. 2. 4):

Հարություն Արկ Սարգսյան

ՎԱՐԴԱՆԱՆՔ ԱՅՍՕՐ

Կյանքի արագահոս ընթացքը կարծես թե տանում է մարդուն մի հանգրվանից դեպի մյուսը, մղում է նրան մշտապես զարգանալու, ապրելու ավելի լավ, սակայն դարերի փորձը վկայում է այն մասին, որ շատ քիչ բան է փոխվում մարդու կյանքում. Սողոմոն Իմաստունի հազարամյակներ առաջ հնչեցրած հարցերը մնում են առկախ և արդիական: Մարդը տակավին փնտրտուքի մեջ է, որովհետև նա այդպես էլ չհասավ իր ցանկալի հանգրվանին՝ լիարժեք և ճշմարիտ երջանկությանը: Ինչպես ամբողջ մարդկությունը, այնպես էլ հայը մշտապես ընթացել է այդ փնտրտուքի ճանապարհով, սակայն ի զարմանս բոլորի, նա առաջինն է համարձակվել բարձրաձայնել աշխարհին, որ գտել է փափագելի երջանկության ճանապարհը: Գտել է ոչ թե նյութական բարեկեցության կամ ազգային փառասիրության մեջ, ոչ թե անտիկ աշխարհի բարձր մշակույթի կամ հելլենական իմաստության մեջ, այլ՝ հանձին Քրիստոսի, որն աղբյուրն է սիրո և ճշմարիտ երջանկության:



Հայի հանդիպումը Քրիստոսի հետ եղավ շրջադարձային, եղավ նոր քայլ, ամեննին նոր ճանապարհ, որն ըմբռնելի չէր շրջապատող շատ ազգերի համար, քանզի հասկանալու համար քրիստոնեության լույսը, անհրաժեշտ է գտնվել նրա մեջ, պետք է քայլել ու ապրել նրանով, այլկեպ այն միշտ անհասկանալի և խորթ կլինի՝ ինչպես ամեն մի մեծ նորություն հասարակության կյանքում: Հայը գտավ իր ճանապարհը, քաջաբար բարձրացրեց քրիստոնեության դրոշը ի տես աշխարհի, որն այն ժամանակ դաժանորեն հալածում և կոտորում էր Քրիստոսի հետևորդներին: Բնական էր, որ պետք է գար ժամանակը հավատի վկայության, պետք է հրով փորձվեր արարատյան ոսկին, որպեսզի դառնար էլ ավելի կատարյալ ու անբիծ, պետք է ևս մի անգամ արժևորվեր այն, ինչ դար առաջ ընդունել էին հայոց մեծերը: Ավարայրի վկայությունը լավագույնս ապացուցեց, որ մեր ընդունած հավատը լոկ ավանդված մի սովորույթ չէ, կամ հնուց եկած մի հավատալիք, այլ ամենամեծ գանձն է, որի համար հարկադրված դեպքում կարելի է և պետք է տալ ամենաթանկը՝ կյանքը, և ոչ միայն քո, այլև՝ քո սիրելիների: Եվ հայը առանց վարանելու վկայեց, քանզի ուրանալ Քրիստոսին, նշանակում էր ուրանալ ինքդ քեզ, հրաժարվել կյանքի աղբյուրից, որի հետ միավորված պիտի լինեիր հավիտենական ու անխզելի սիրո կապով:

Վարդանն ու իր քաջ ընկերները ոչ միայն վառ անցյալ են մեր ազգի պատմական վայրիվերումների ճանապարհին, այլև խոսող ներկա, խրատական հայացք անցյալի գրկից,

որն այսօր էլ հարցնում է հային. «Իսկ դու ինչքանո՞վ ես արժևորում այն երկնային պարգևը, որի համար մենք երջանկաբար նահատակվեցինք, ի՞նչ է քեզ համար քրիստոնեությունը՝ հանդերձա՞նք, թե՞ մաշկի գույն»: Այո՛, շատերի համար Վարդանանք մշուշոտ անցյալի էջեր են. ոմանց համար նրանց պատմությունը անհաջող մի մարտ էր, որն արդարացնելու համար հերոսացրել ենք զոհված այրերին, կամ գեղեցիկ մի պատում, որը լուռ ննջել է պատմության գերեզմանում: Ոմանց համար էլ այն հայ ոգու մեծության խոսուն վկայություն է, որին երբեք ու երբեք չի կարող լռեցնել ոչ ոք, այլ միայն հայը, երբ կորցնի վեր տանող ճանապարհը, երբ տատանվելով տարատեսակ օտար քամիներից՝ պոկվի իր ինքնության սրբազան արմատներից:

Ամեն տարի մենք հիշատակում ենք Ավարայրի վառ վկայությունը, որը ոչ միայն հերոսական սխրանքի ոգեկոչումն է, որով ներշնվել են սրբությունը օտարների ժանիքներից պաշտպանող բյուրավոր հայորդիներ, այլև հայի ինքնության քարտեզն է, որը բացելով՝ նա այսօր կարող է տեսնել, թե որտեղ է գտնվում, որ ճանապարհին՝ վասակյա՞ն, թե՞ վարդանյան...

Եվ ամենքս մեզ պիտի հարց տանք, թե մենք ինչպե՞ս կարձագանքեինք Հազկերտի հրամանին կամ ի՞նչ կզոհաբերեինք հանուն Քրիստոսի, հանուն Ճմարտության ու սիրո:

Ասում են՝ ժողովուրդը, որը չունի անցյալ, չունի նաև ապագա: Գուցե կարելի է համաձայնվել, սակայն ժողովուրդը, որն ունի պայծառ ու օրինակելի անցյալ, սակայն չի արժևորում այն ներկայում և չի դարձնում այն ապագայի հիմք, ապա ինչով է տարբերվում անցյալ չունեցողից: Ասում են, որ պատերազմում հաղթում է ոչ թե նա, ով հանճարեղ մարտավարություն ունի, այլ նա, ով կարողանում է անսխալ ընթանալ իր ծրագրով, նա ով չի կրկնում անցյալի սխալները, քանզի սխալները երբեմն ճակատագրական են ու անդառնալի: Այսօր հայը ստիպված է հաղթահարել անցյալ դարի աստվածուրաց համակարգի սխալ ազդեցության հետևանքները: Այո՛, մեկ դար չանցավ այն տարիներից, երբ լռեցրին Վարդանանց քաջարի կանչը հայի սրտում՝ նրան ցույց տալով այլ ճանապարհ, որը կարծես թե նման էր իր ընտրածին: Այնտեղ նույնպես ներկա էին հավասարությունը, եղբայրությունը, ընդհանուր շահերը մասնավորների փոխարեն, սակայն ներկա չէր Նա, ում համար դարեր շարունակ առանց վարանելու հայը ընծայում էր իր կյանքը, որպեսզի իր սերունդները հաստատ մնան միակ և ճշմարիտ ընտրության մեջ: Դժվար է պատկերացնել, թե ինչ էին զգում քաջարի Ավարայրի վկաները, երբ երկնային բարձունքներից տեսնում էին, թե ինչպես է հայն իր ձեռքով քանդում Աստծու տունը և ոտնակոխ անում Տերունական կենդանարար Խաչը: Ճակատագրական սխալ, որի դրոշմը հայը տակավին փորձում է ջնջել, սակայն այն դեռևս մնում է՝ հիշեցնելու գալիք սերունդներին կատարված սխալների դառը պտուղների մասին: Վարդանանք այսօր գուցե ավելի խոսուն են, քան տասնհինգ դարեր առաջ, քանզի այնժամ հայը ավելի հաստատակամ էր իր քրիստոնեական ընթացքի մեջ, ավելի շատ էր արժևորում իր փրկության ուղին, քան այսօր: Ավարայրն արդյո՞ք ավարտվեց, արդյո՞ք բոլոր մարտահրավերները հաղթահարված են և ոչինչ այլևս չի սպառնում մեր ներկա և ապագա ճշմարիտ երջանկությանը և սիրո խաղաղ նավահանգստին հասնելուն: Կամ էլ հայը նորից պետք է կրկնի անցյալի սխալները, նորից չլսի երանելի Վարդանի

մարտական կանչը, ընտրի այլ ճանապարհ, որտեղ նույնպես ներկա կլինեն հային հարազատ արժեքները՝ ազատությունը, հավասարությունը, ինքնուրունությունը, սակայն ներկա չի լինի Նա, ում համար երջանկաբար ապրեցին ու նահատակվեցին բյուրավոր աստվածասեր հայեր՝ վկայելով միասիրտ ու միախորհուրդ, որ ***«ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ մարդիկ, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ ներկա և ո՛չ գալիք բաները, ո՛չ զորությունները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը և ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այն սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսով է»*** (Հռոմ. 8.38-39):

Դավիթ սրկ Գիշյան

ԱՆՀԱՅՏ ՃԵՄԱՐԱՆԱՎԱՐՏ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Անաստաս Միկոյանը ծնվել է Սանահինում: Նրան այնտեղ շատ էին սիրում և միշտ գրկաբաց ընդունում: Լավ ընդունելության հետ կապված նույնիսկ թևավոր խոսք էր ծնվել. երբ մեկը որևէ մեկին լավ էր ընդունում, ասում էին՝ «ոնց որ Միկոյանը մտնի Սանահին»: Հայ աղքատ ընտանիքից դուրս եկած այս երիտասարդին հաջողվել է դառնալ 20-րդ դարի առավել հայտնի քաղաքական գործիչներից մեկը: Անաստասը մեկ տարի սովորել է Սանահինի դպրոցում՝ Զաքարիա վարդապետի մոտ: 1906թ. Սանահին այցելած Վիրահայոց թեմի առաջնորդի աջակցությամբ ընդունվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Ուսանելու ընթացքում կրոնի ուսուցչի հետ այնքան է վիճել, որ նրան Անաստասի փոխարեն անվանել են «Անաստված»: Նրա բռնավորի կերպարն անջինջ է մնացել հետագա հուշագիրների էջերում: 1930-ական թվականներին, երբ Հովհաննես Թումանյանի որդիները ձերբակալված էին, բանաստեղծի կինը՝ Օլգան, մեկնում է Մոսկվա՝ ձերբակալված որդիների համար բարեխոսելու, Միկոյանը նրան թույլ չի տալիս նույնիսկ տուն մտնել: Նույն կերպ, 1969 թվականին՝ Հովհաննես Թումանյանի հարյուրամյակի առթիվ կազմակերպված տոնախմբության ժամանակ, երբ ի թիվս շատ հայտնի գործիչների, Միկոյանը ևս ներկայանում է տուն-թանգարան, տիկին Օլգան թույլ չի տալիս Անաստաս Միկոյանին ներս մտնել՝ բոլորի ներկայությամբ նրան անվանելով «անաստված Անաստաս»:

Դպրոցում Միկոյանը համարվել է Հարություն Ալամդարյանի սան-թոշակառուն (վերջինիս խորհրդով էլ տպագրել է գրական ձեռագիր-ալմանախ): Այս տարիներին նրա միակ հիշատակելի գործը Րաֆֆու վեպերի ընթերցանությունն էր: Ինչպես ինքն է հիշում. «Րաֆֆու գործերն իմ գիտակցության մեջ նկատելի հետք են թողել»: Ներսիսյան դպրոցում ուսումն ավարտելուց հետո ընդունվել է Գևորգյան ճեմարան, ուր կազմակերպել է մարքսիստական խմբակ: 1958թ. Ա. Միկոյանը Վազգեն Ա կաթողիկոսին մի առիթով ասել է, որ ինչ-որ մեղք է զգում Հայ եկեղեցու հանդեպ, քանզի չի արդարացրել այն հույսերն ու ջանքերը, որ ծախսվել են իր ուսման վրա. «Խոսելով տնտեսական լեզվով՝ ինձնից՝ հայկական հզոր ճեմարանի ուսանողից, ստացվել է արտադրական խոտան»: Ի պատասխան՝ Վազգեն վեհափառը ժպտացել է ու ասել. «Դուք սխալվում եք: Մենք դրանից ոչ միայն չենք վշտացել, այլև նույնիսկ հպարտանում ենք, որ այնպիսի մարդ, ինչպիսին դուք եք, դուրս է եկել մեր ճեմարանից: Ավելի շատ թող լինի նման արտադրական խոտան»:

Անաստաս Միկոյանի կյանքում առանձնակի նշանակություն է ունեցել ստալինյան տիրապետության ժամանակաշրջանը: 1921 թ. հունվարին ծանոթանալով Ի. Ստալինի հետ (մինչև նրա մահը՝ 1953 թվական)՝ հավատարմորեն ծառայել է վերջինիս: Ա. Միկոյանը ԽՍՀՄ 8

բարձրաստիճան ղեկավարներից մեկն էր, որ Ի. Ստալինին «դու»-ով էր դիմում: Պատահական չէ, որ նրա կենսագրության մեջ միշտ շեշտվում էր, որ նա «ընկեր Ստալինի ամենամերձավոր աշակերտներից ու զինակիրներից մեկն էր»:

Անաստաս Միկոյանը, լինելով գերտերության երկրորդ դեմքը, մեծ ներդրում է ունեցել Խորհրդային Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման և հայ ժողովրդի կենսամակարդակի բարձրացման մեջ: Միկոյանի անվան, գործունեության, վաստակի շուրջ այս վերջին շրջանում բուռն քննարկումներ են ընթանում: Ինչպես ցանկացած քաղաքական գործիչ և ցանկացած մարդ, Անաստաս Միկոյանը ևս սխալական էր, ինչը դրսևորվել է նրա գործունեության մեջ: Միկոյանը անմասն չի եղել Խորհրդային Միության մեջ ընդունված որոշումներից, սակայն նա միանձնյա որոշում կայացնող չի եղել: Անաստաս Միկոյանն իր դարի, իր կուսակցության և տիրող մթնոլորտի արզասիքն էր և չէր կարող զերծ մնալ նաև տհաճագործություններից: Չպետք է մոռանանք, որ խորհրդային ժամանակներում ավելի նշանավոր և բարձրաստիճան կուսակցական-պետական գործիչ, քան Անաստան Միկոյանն էր, մենք չենք ունեցել:

Մեզ համար հպարտանալու առիթ է, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին թշնամու թիկունքում գործել է Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը: Ինչպես տեսնում ենք Միկոյանի կենսագրությունը թերթելիս՝ նա շատ խիզախ և համարձակ մարդ է եղել: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա մի խումբ հայրենակիցների, ինչպես նաև ճեմարանի ուսանողների հետ ընդգրկվում է հայ կամավորների լեգենդար հրամանատար Անդրանիկի ջոկատում ու մասնակցում մարտերին մինչև 1915 թվականի ապրիլը, երբ վիրավորվում է և ընկնում հոսպիտալ:

Անաստաս Միկոյանի շնորհիվ է, որ մարշալ Հովհաննես Բաղրամյանը փրկվել է մահապատժից: Նա գաղտնի կերպով իր աջակցությունն է ցույց տվել նաև մեր բազմաթիվ մտավորականների: Նրա շնորհիվ է, որ աշխարհը հայտնաբերեց Արամ Խաչատրյանին: 50-ականներին Րաֆֆու և Ռափայել Պատկանյանի ստեղծագործությունները արգելված էին որպես ազգայնամոլության դրսևորումներ: Միկոյանի միջնորդությամբ նրանք սկսեցին տպագրվել դասագրքերում: Նրա խնդրանքով Ավետիք Իսահակյանը զերծ մնաց իր դեմ ծառացած սպառնալիքներից ու Միկոյանի խնդրանքից հետո էր, որ Ստալինը նույնիսկ գրեց. «Այս ծերունուն չդիպչել»:

Անաստաս Միկոյանը մեծագույն դիվանագետ էր, որը, համադրելով իր գիտելիքներն ու բացառիկ տաղանդը, կարողացավ իսկայական ներդրում ունենալ և՛ Խորհրդային Միության, և՛ հայ ժողովրդի կյանքում: Մի անգամ ինքն էլ հրապարակավ ասաց. «Մենք բոլորս էինք այն ժամանակ սրիկաներ»: Այսպիսով՝ Միկոյանի նպաստը դեստալինիզացիայի, հասարակության ժողովրդավարացման առումով այժմ հստակ թերագնահատվում է, մինչդեռ աhռելի է նրա դերակատարությունը այդ գործընթացներում:

Գառնիկ դպիր Սարդարյան

Ֆեյսբուքում մեզ կարող
եք հետևել այստեղ՝
www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ
հետևյալ էլ. հասցեով՝
gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, Գևորգյան հոգևոր
ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180

Մեր telegram-ի պաշտոնական ալիքը՝ t.me/gevorgyanseminary